## Ներդրումային ծրագիր-առաջարկ

## Գինու արտադրամասի կառուցում և խաղողի տարբեր տեսակներից գինու արտադրություն և իրացում

_______________________________________________
(Ներդրումային ծրագրի անվանումը)

### Ամփոփ նկարագիր

*Ամփոփ նկարագրել ներդրումային ծրագիր-առաջարկը, մասնավորապես՝ ներդրման ոլորտը, արտադրվող ապրանքը կամ տրամադրվող ծառայությունը, հիմնական սպառման շուկաները, ներդրման տեսակը (նոր ձեռնարկություն, գործող ձեռնարկության ընդլայնում, գործող ձեռնարկության վերապրոֆիլավորում), ներդրման համար նախատեսվող /նախընտրելի/ տարածաշրջանը. մարզը, համայնքը: Ներդրումային ծրագրի ընդհանուր արժեքը, այդ թվում մասնավոր ներդրողի, այլ ներդրողների (եթե կան) ներդրումը և ակնկալվող աջակցությունը:*

***Ծրագրով նախատեսվում է իրականացնել գինու արտադրություն և իրացում՝ 100 տոննա խաղողի տարբեր տեսակներից՝ 30 տոննա Կանգուն, 56 տոննա Արենի և 14 տոննա Կարմրահյութ:***

***Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է կառուցել պահեստ և գինու գինեգործական մասի արտադրական տարածք, ինչպես նաև ձեռք բերել անհրաժեշտ սարքեր և սարքավորումներ:***

***Պահեստը պետք է բաղկացած լինի երկու մասից՝ պատրաստի արտադրանքի և օժանդակ նյութերի պահեստներից: Այս երկու պահեստները պետք է գտնվեն նույն տարածքում՝ բաժանվելով միմյանցից պատով: Պահեստի շենքի չափերը նույնպես կարող են լինել փոփոխական, կախված աշխատանքների կազմակերպման ձևից, շենքը կուննենա տարբեր չափեր: Եթե պալետները դասավորվեն մեկ հարկով, ապա շենքի 3մ բարձրությունը բավարար է, եթե դասավորվեն մինչև 4 հարկ, ապա բարձրությունը պետք է լինի առնվազն 8մ: Պահեստը անհրաժեշտ է նախատեսել այնպես, որ հետագա զարգացումների դեպքում հնարավոր լինի տարածքը մեծացնել: Սկզբի համար կարելի է նախատեսել հետևյալ չափերը՝ երկարություն=20մ, լայնություն=5մ, բարձրություն=3մ:***

***Գինու գինեգործական մասի արտադրական տարածքը պետք է լինի մեկ շինության մեջ: Այս շինությունը պետք է բաղկացած լինի երկու հիմնական մասերից՝ խաղողի վերամշակման աարտադրական մասից կամ մեքենայատնից և գինու մառանից: Այս երկու արտադրամասերը պետք է գտնվեն իրար մոտ՝ մեկ ընդհանուր շինության մեջ: Մեքենայատանը խաղողը ընդունվում է բունկերներում, այնուհետև չանչազատվում, ջարդվում և մամլվում է: Որից հետո սպիտակ խաղողի դեպքում ստացված խաղողի թարմ հյութը՝ քաղցուն, տեղափոխվում է մառանում գտնվող խմորման պահամաններ: Կարմիր խաղողը ջարդումից հետո ամբողջությամբ տեղափոխվում է խմորման պահամաններ: 100տ խաղող վերամշակելու համար հարկավոր է 1 բունկեր, 1 չանչազատիչ-ջարդիչ, 1 փլուշապոմպ, 1 մամլիչ, թափոնների էվակուացիոն համակարգ և համապատասխան չժանգոտվող պողպատյա և ռետինե խողովակներ: Այս սարքավորումները պետք է տեղադրված լինեն մեքենայատանը:***

***Գինու մառանը պետք է լինի մեքենայատան շարունակությունը, որտեղ տեղադրված կլինեն հիմնականում պահամանները: Մեքենայատունը և գինու մառանը պետք է ունենան կոյուղի և օդափոխության համակարգ: Մառանը պետք է ունենա հնարավորություն հետագա պահանջվող զարգացումների համար:***

***Մեքենայատան և գինու մառանի համար կարելի է նախատեսել հետևյալ չափերը. մեքենայատուն՝ երկարություն=10մ, լայնություն= 10մ, բարձրություն= 6մ և գինու մառան՝ երկարություն=22մ, լայնություն=10մ, բարձրություն=6մ:***

1. **Ներդրման նկարագրություն**

*1.1.* *Ներդրման գումարը* ***- 252.3 մլն ՀՀ դրամ կամ 450,536 եվրո*** ***(1եվրո =560դրամ)***

- *Պահանջվող ամբողջ գումարը* ***- 252.3 մլն ՀՀ դրամ կամ 450,536 եվրո***
- *Այլ ներդրողներ -* ***չկան***
- *Նկարագրել ներդրման տեսակը՝* ***նոր ձեռնարկություն /start up/***
- *Անվանումը* ***-«Ալեքսանյան Գրիգոր» ՍՊԸ***
- *Գտնվելու նախատեսված վայրը* ***-ՀՀ Արմավիրի մարզ, Մրգաշատ համայնք***
- *Սեփականատեր (սեփականատերեր)* ***- Գրիգոր Ալեքսանյան***
- *Կազմակերպա-իրավական տեսակը* ***-ՍՊԸ***
- *Տեղեկություններ ձեռնարկության տնօրենի վերաբերյալ՝ կոնտակտային տվյալներ -* ***Գրիգոր Ալեքսանյան. հեռ.՝ +37491401977:***
- *Աշխատողների նախատեսվող թվաքանակ* ***-սեզոնային աշխատողներ՝ 5***
  ***-մշտական աշխատողներ՝ 3***
- *Ձեռնարկության նախագծային հզորություն* ***-75000 շիշ/տարեկան***

2. **Շուկայի ուսումնասիրություն**

**2.1.** *Ապրանքի/ծառայության շուկայի նկարագրությունը*

*2.2 Հիմնական սպառման շուկաների նկարագրություն -* ***ՀՀ-ում վերջին 2 տարիների ընթացքում նկատվում է գինու սպառման աճ: Սակայն գերիշխողը մնում է օղին, գինին, հետո կոնյակը: Գինու ռուսական և չինական շուկաները գնալով ավելի հետաքրքիր են դառնում: Այս մասին է վկայում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության վերջերս կատարված մարքեթինգային ուսումնասիրությունները: Այստեղից պարզ է դառնում, որ ստեղծվել են գինու սպառման համար բարենպաստ պայմաններ ռուսական և չինական շուկաներում:***

**2.3.** *Հիմնական մրցակիցների նկարագրություն -* ***ՀՀ շուկայում գործող գինու արտադրությամբ զբաղվող և որակ ապահովող ընկերությունները***

*2.4. Պահանջարկի դինամիկան հիմնական սպառման շուկաներում*

3. **Ձեռնարկության մարքեթինգային քաղաքականությունը**

*3.1. Գովազդային և առաջմղման քաղաքականություն –* ***Մրգաշատ համայնքում ամեն տարի հոկտեմբեր ամսին տեղի է ունենում արդեն ավանդույթ դարձած «Մաճառի տոնը», որին մասնակցում են բազմաթիվ հյուրեր, ինչպես հանրապետությունից այնպես էլ արտերկրից տեղում կկազմակերպվի գինու համտես համապատասխան տարաներով, մասնակցություն միջազգային մրցույթներին և ցուցահանդեսներին:***

*3.2. Տարածման ուղիները -* ***ֆեյսբուքյան էջով, համացանցում ապրանքանիշը գովազդող հոլովակների միջոցով, համտեսների կազմակերպման միջոցով, վաճառք տեղում լիտրով և շշալցված, և մասնագիտացված խանութներում:***

*3.3. Գնային քաղաքականություն -* ***Բարձր որակ, մատչելի գին***

4. **Վաճառքի կանխատեսում**

*4.1. Վաճառքի ծավալներն արտահայտված ֆիզիկական և դրամական միավորներով, 5 տարվա կտրվածքով:* ***Նախատեսվում է տարեկան վաճառել 75000 շիշ, 5 տարվա կտրվածքով՝ 5*75000=375000 շիշ:***

## 5. Ֆինանսական հաշվարկներ

*5.1. Ինքնարժեքի հաշվարկ*

1x0,75լ շիշ կարմիր **գինու** (Արենի-80% Կարմրահյութ-20%)ինքնարժեքի և գնի  հաշվարկ

| **Անվանում** | **ՀՀ դրամ** | **%** | | |
|---|---|---|---|---|
| գինի կամիր | 240 | 29.16 | | |
| շիշ | 126 | 15.31 | | |
| խցան | 50 | 6.08 | | |
| թասակ | 8 | 0.97 | | |
| պիտակ | 50 | 6.08 | | |
| արկղ | 20 | 2.43 | | |
| պոլիէթ. թաղանթ | 4 | 0.49 | | |
| հոսանք | 10 | 1.22 | | |
| վառելիք | 5 | 0.61 | | |
| աշխ-ձ | 80 | 9.72 | | |
| աքցիզ | 130 | 15.80 | | |
| ամորտիզացիա | 30 | 3.65 | | |
| շշալից | 50 | 6.08 | | |
| այլ | 20 | 2.43 | | |
| **ընդամենը** | **823** | 100.00 | | |
| մարժա | 600 | 72.90 | շահութահարկ | զուտ եկամուտ |
| **ընդամենը** | **1423** | | 120 | 480 |
| | | | | |
| մարժա | 150 | | | |
| **ընդամենը** | **1573.00** | | | |

1x0,75լ շիշ սպիտակ գինու(Կանգուն-100% ) ինքնարժեքի և գնի  հաշվարկ

| **Անվանում** | **ՀՀ դրամ** | **%** |
|---|---|---|
| գինի սպիտակ | 150 | 20.46 |
| շիշ | 126 | 17.19 |
| խցան | 50 | 6.82 |
| թասակ | 8 | 1.09 |
| պիտակ | 50 | 6.82 |
| արկղ | 20 | 2.73 |
| պոլիէթ. թաղանթ | 4 | 0.55 |
| հոսանք | 10 | 1.36 |
| վառելիք | 5 | 0.68 |
| աշխ-ձ | 80 | 10.91 |
| աքցիզ | 130 | 17.74 |
| ամորտիզացիա | 30 | 4.09 |
| շշալից | 50 | 6.82 |
| այլ | 20 | 2.73 |
| **ընդամենը** | **733** | 100.00 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| մարժա | 600 | 81.86 | շահութահարկ | զուտ եկամուտ |
| **ընդամենը** | **1333** | | 120 | 480 |
| | | | | |
| մարժա | 150 | | | |
| **ընդամենը** | **1483.00** | | | |

*5.2. Ակնկալվող շահույթի կամ շրջանառության հաշվարկ 5 տարվա կտրվածքով*

*5.4. Ներդրումների հետգնման ժամկետ - **6.2 տարի***

## 6. Ծրագրի սոցիալ-տնտեսական ազդեցությունը

- *Ձեռնարկության կամ ծառայության մատուցման ազդեցությունը մարզի կամ համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակի վրա - **Ծրագրի իրականացմամբ խաղողի այգիների տերերի համար խաղողի մթերման նոր հնարավորություն, նոր աշխատատեղերի և համայնքում լրացուցիչ եկամուտների ստեղծման հնարավորություն**:*
- *Նոր ստեղծված աշխատատեղերի քանակը - **կստեղծվեն 5 սեզոնային և 3 հիմնական աշխատատեղեր:***

## 7. Պետությունից կամ այլ ներդրողից ակնկալվող օժանդակություն և պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն

- ***Հարկային արտոնություններ***
- ***Վարկավորում - ցածր տոկոսադրույքով երկարաժամկետ վարկեր***
- ***Երկարաժամկետ լիզինգ՝ սարքավորումներ ձեռք բերելու համար***
- ***Դրամաշնորհներ և փոխառություններ:***